



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 412 - Ա

22 հոկտեմբերի 2019 թ.

**ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի մշակույթի, ժառանգության և ապակենտրոնացված համագործակցության հարցերով փոխնախագահ Պատրիկ Կուրտոյի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի հրավերը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Նարեկ Մանուկյանին 2019 թվականի նոյեմբերի 5-ից նոյեմբերի 11-ը ներառյալ, թույլատրել մեկնելու Ֆրանսիայի Հանրապետություն՝ Իզերի դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի միջև ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում՝ 2019-2021 թվականների նոր համագործակցության պայմանագրի կնքման աշխատանքներին մասնակցելու համար:

2. Գործուղման ծախսերը կհոգա հրավիրող կողմը:

22.10.2019

---

**ՍԱՐՁՊԵՏ** Подписано: SANYAN GNEL 1710830069

**Գ. ՄԱՆՈՍՅԱՆ**  
ք. Գավառ